

ԳԼՈՒԽ ԺԹ ԹՈՐԹՈՒՄ

Թեպետ ձիւնը ամէն տեղ նստած էր եւ հազիւ սկսած էր հալիլ Բարձր Յայոց աշխարհին մէջ, բայց Թորթումի գաւառը գարնան հոտերը սկսած էին. երբ Գուրգէն իջաւ լեռներէն իւր գունդով՝ ինչպէս սովորութիւնն էր միշտ առջեւէն, բլրոց եւ դաշտաց կանաչը, ծառերուն ձիւնափայլ ծաղիկը իր սիրտը չուրախացուցին: Յեղինէի դառն յիշատակը, որու հետ ինք միտքը դրած էր դառնալ եւ բնակիլ հոն, ամէն գեղեցկութիւն ոչինչ կ'ըներ աչքին:

Բայց Գուրգէնի քով կիրք կար այդ յոյն իշխանաց անիրաւութեան դէմ՝ որ օգուտ քաղելով իր հեռաւորութենէն տիրացեր էին իւր բերդին եւ կարասեաց, իրենց կայսեր հրամանը նաեւ արհամարհելով. ուստի լի բարկութեամբ կը քէր Տոլակ, մինչեւ որ Բագրատունի իշխանիկը մօտենալով իրեն ձայնեց.

– Գուրգէն իշխան, Գուրգէն իշխան, տէ՛, ձիւնքը պիտի սպաննես, տղա՛յ քիչ մը ծանր գնա:

– Իրաւունք ունիս, իշխանիկ,– ըսաւ Գուրգէն,– բայց շատ բան չի մնաց, եւ ես կ'ուզես նախ միայն մտնել ներս բերդը:

– Բայց եթէ միայն մտնես շատ վտանգաւոր գործողութիւն մը կ'ընես, վասնզի յոյն իշխանը երկու ծառայով առանձին չի բնակիր հոն:

– Քանի՞ հոգի կրնայ ունենալ այդ աւազակը:

– Ո՛վ գիտէ, գոնէ երեսուն-քառասուն գինեալ մարդիկ պետք է ունենա:

– Միթէ՞ ես միւսակ բաւական չե՞մ այդ կնամարդի կը պարսպեն վար թափելու: